

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

## ՄԱՍԵԱՅ ԱՂԱԽՆԻՈՅ ԵՒ ԾԻԱԾԱՆԻ

ՎԱՍՆ **1863** ԱՄԻՆ



ՂԱԽՆԻՆ ՄԱՍԵԱՅ անխոտոր մնալով միշտ իւր սկզբնական նպատակէն, իրեն պարտք կճանաչէ տարուէ տարի աւելի օգտակար լինել ազգին՝ որչափ որ իւր կարողութիւնը եւ միջոցները կնեւեն, եւ որչափ որ կրնան իրաւամբ պահանջել իրմէ իւր ընթերցողաց մեծ եւ արգարամիտ մասը:

Ուստի **1863**-ին մէջ եւս կուզէ մնալ ճշմարտասէր եւ ճշմարտասէր, եւ միանգամայն խոհական ազգարար բարեաց. անկուռասէր, բայց եւ աներկիւղ յանդիմանիչ չարեաց, իւր ընթերցողաց աչքը բացող՝ որ զգուշանան ազգակործան եւ ազգավնաս ձեռնարկութիւններէ, եւ թմրած մաքերը արթնցընող՝ որ ետ չմնան ըստ կարի իրենց չորս գին պատող յառաջագէժ ժողովորդներէ: Ասոր համար պակաս պիտի չընէ իւր բարոյական դեղերն ու խրատները՝ որքան եւ կակծեցուցիչ երեւին խղիւսյութեալ վիրաց, եւ ոչ օգտակար առակները՝ թէպէտ եւ բամբասուռի յոմանց՝ իբր թէ մասնաւոր դիտմամբ այս ինչ կամ այն ինչ անձին եւ ժողովրդեան համար կհրատարակէ զանոնք: Ազգին կարօտութիւնները կրցածին չափ աչքէ պիտի անցընէ՝ անոնց դարմանն ընել տալու յորդորելով, եւ ընդհանրապէս մերազնեայ ժողովրդոց ընթերցասիրութիւնը վառելու պիտի աշխատի՝ հեաքրքրական լուրերն ու տեղեկութիւնները շտոյցընելով:

Այս խօսքերէն եւս հարկաւ պիտի իմանան բարեսէր ընթերցողներն որ ՄԱՍԵԱՅ ԱՂԱԽՆԻՆ գէթ փոքր իշատէ հասկըցեր է թէ ինչ է իւր պարտքը, եւ ինչ է բաժանորդներուն իրմէ պահանջածը: Կմնայ որ բաժանորդներն եւս հասկընան թէ ինչ փոփոխութիւններ ընելու հարկադրուած է իւր հրատարակութեանը կերպին վրայ՝ բաժանորդաց կարօտութեանը, ախորժակին եւ թուոյն նայելով:

Ա. Եւրոպայի ժողովրդոց այժմու կասկածելի վիճակը, արեւելեան ազգաց մէջ երեւցած ու պատրաստուած փոփոխութիւնները, եւ մասնաւորապէս Ռուսաստանի մէջ Կայսերական բարեհաճութեամբ արգէն հրատարակուիլ սկսած ազատական մեծամեծ կարգադրութիւնները կտախպեն զմեզ ընդարձակել ըստ կարի մեր ԾԻԱԾԱՆԻՆ Գաղաքական մասը, եւ գոհ չլինել այսուհետեւ միայն

ընդհանուր տեսութեան ներքին եւ արտաքին քաղաքական անցից, այլ եւ մանրամասն եւ ստոյգ տեղեկութիւններ հազարգել մեր ընթերցողաց՝ (ինչպէս որ շաատերը կ'ընդրեն) պաշտօնական լրագիրներէն քաղելով:

Բ. Գիտնալով թէ որքան օգտակար եւ ախորժելի բան է ամենուն իրենց կարգացած գիտելիքներէն ոմանց պատկերն ալ ունենալ աչքի առջեւը, կուղեմք առաջինէն շնս աւելի պատկերազարդ ընել մեր ամսագիրը, որով եւ շնս աւելի հետաքրքրական եւ գուարճալի՝ նաեւ կարգաւ չգիտցողներուն կամ չսիրողներուն:

Գ. Երկու տարուան փորձէն տեսնելով որ ամսագրոյս ամիսը երկու անգամ ելնելովը որչափ որ ծախքերն իս կրկնապատիկ աւելցան՝ նոյն համեմատութեամբ չբաղմացան նաեւ մեր բաժանորդները, որոշեցինք որ 1865-ին Աղաւնին դարձեալ ամսէ ամիս միայն հրատարակեմք:

Դ. Առանց գանգատիլ ուղեւու մեր բաժանորդաց մէկ մասին վրայ՝ որ իրենց տարեկան բաժանորդութեան փողերը դեռ չեն վճարած զանազան պատճառներով, պէտք է ըսեմք թէ որովհետեւ անկարելի բան է այսպիսի հրատարակութիւն մը քիչ ծախքով առաջ տանիլ, ահա այժմէն կ'յանձնեմք մեր Գործակալաց որ այս Յայտարարութիւնը տարածելու ատեն ստոյգ կերպով իմանան եւ իմացընեն մեզ շուտով թէ իրենց գտնուած քաղաքներուն մէջ ո՞րք ոմանք կամ քանի հոգի կան 1865-ին Մասեաց Աղաւնին սիրով ընդունիլ եւ սահմանեալ բաժինը՝ այսինքն 6 բուլլին՝ Յունուարի ամսատետրը առաձններնուն պէս վճարել կամեցող, որպէս զի խրմբագրատունն ալ այժմէն գիտնայ թէ քանի օրինակ պիտի տպագրէ Աղաւնին:

Ե. Յայտնի է ամենուն որ մեր ԾԻԱԾԱՆը ռուսերէն մաս լմը եւս ունի, որ իւր նպատակին հասնելու շատ յարմար ոճով կ'շարագրուի ու ամսէ ամիս կ'հրատարակուի: Բայց այս ռուսերէն մասին բաժանորդ գրուողներուն սակաւութիւնը կստիպէ զմեզ առ այժմ՝ դադարեցընել ասոր հրատարակութիւնը առաջիկայ 1865 տարուոյն մէջ:



Հրամանա Գրաքննութեան Խճեղոսիա, ի11 Սեպտեմբերի 1862.